Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 8.78 %-ով և տարեվերջին կազմել մոտ 9.36 մլրդ դրամ: Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է պետական գանձապետական պարտատոմսերում ներդրումների աճով: Տարվա կտրվածքով ներդրումները պետական գանձապետական պարտատոմսերում աճել է 40.06 %-ով կամ 1.0 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով 3.4 մլրդ դրամ: Բանկի վարկային ներդրումները տարվա կտրվածքով նվազել են 19.3 %-ով: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 3.39 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 36.22 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 3.73 %-ը կամ 126.6 մլն. դրամ, իսկ 29.67 %-ը կամ 1.0 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 12.78 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը՝ 145.21 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում մոտ 0.49 մլրդ դրամը կամ վարկային ներդրումների 14.45 %-ը կազմել է հիփոթեքային վարկերը, իսկ 0.38 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 38.0 %-ը՝ սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների և վարկային ներդրումների ծավալներով ՀԲՄ անդամ բանկերի շարքում գրավել է 15-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 0.1 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 0.09 %-ով, իսկ ժամկետային ավանդները նվազել 53.91 %-ով, տարեվերջին կազմելով 0.4 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ նույնպես 15-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 25.41 %-ով, որը ապահովվել է կուտակված շահույթի ավելացման հաշվին: Բանկի կուտակված շահույթը տարեվերջին կազմել է մոտ 149.8 մլն. դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճը կազմել է 124.97 %, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում՝ 4.05 %-ը:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 0.75 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 0.6 մլն դրամով կամ 404.1 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 102.88 %-ով, իսկ ծախսերը՝ 6.74 %-ով, կազմելով համապատասխանաբար 1.23 և 0.44 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 0.79 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համեմատ ցուցանիշին գերազանցում է 307.11 %-ով կամ 595.9 մլն դրամով: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 14-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 15.22 տոկոսային կետով, կազմելով 20.26 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 6.28 տոկոսային կետով, կազմելով 8.01 %:



Արարատ Բանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.) այդ թվում՝ վարկային ներդրումներ	3 970 840	8 542 072	115,12
		1 981 207	2 912 771	47,02
2	Պարտավորություններ (ընդ.) այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	1 495 163	4 708 119	214,89
		4 998	273 518	5372,55
3	Ընդհանուր կապիտալ այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ կուտակված շահույթ/վնաս	2 475 754	3 833 953	54,86
		2 789 977	3 240 000	16,13
		-663 932	244 341	136,80
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	3	x
5	Աշխատակիցների քանակը	x	88	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 115.12 %-ով և տարեվերջին կազմել մոտ 8.54 մլրդ դրամ: Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների, ինչպես նաև պետական գանձապետական պարտատոմսերում ներդրումների աճով: Տարվա կտրվածքով վարկային ներդրումները աճել են 47.02 %-ով կամ 0.93 մլրդ դրամով, իսկ ներդրումները պետական գանձապետական պարտատոմսերում՝ 6659.6 %-ով կամ 3.25 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով 3.3 մլրդ դրամ: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 2.9 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 33.96 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 66.22 %-ը կամ 1.9 մլրդ դրամ, իսկ 20.04 %-ը կամ 0.6 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 88.32 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը՝ 27.78 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում մոտ 0.3 մլրդ դրամը կամ վարկային ներդրումների 10.31 %-ը կազմել է հիփոթեքային վարկերը, իսկ 0.22 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 37.93 %-ը՝ սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՀԲՄ անդամ բանկերի շարքում զրավել է 19-րդ, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 17-րդ տեղը:


2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 214.89 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցափահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 60.0 %-ով, իսկ ժամկետային ավանդները տարեվերջին կազմել է 0.9 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ նույնպես 17-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 54.86 %-ով, որը ապահովվել է կուտակված շահույթի և կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին: Բանկի կուտակված շահույթը տարեվերջին կազմել է մոտ 244.3 մլն դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճը կազմել է 136.8 %, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում՝ 6.37 %-ը: Բանկի կանոնադրական հիմնադրամը տարվա ընթացքում համալրվել է մոտ 0.45 մլրդ դրամով կամ 16.13 տոկոսով:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 0.91 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 188.74 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 65.13 %-ով, իսկ ծախսերը նվազել 1.39 %-ով, կազմելով համապատասխանաբար 4.93 և 3.95 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 0.98 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, իսկ նախորդ տարվա բանկի վնասը կազմել է 1.02 մլրդ դրամ: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 11-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 65.03 տոկոսային կետով, կազմելով 23.69 %, (3-րդ ցուցանիշն է ՀԲՄ բանկերի թվում), իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 36.41 տոկոսային կետով, կազմելով 10.63 % (ամենաբարձր ցուցանիշն է ՀԲՄ բանկերի մեջ):

2006 թ.-ին բանկը Գերմանահայկական հիմնադրամի կողմից «ՀՀ-ում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման» ծրագրի շրջանակներում հայտարարված «Հիփոթեքային վարկերի տրամադրման» մրցույթում ճանաչվել է հաղթող, ինչպես նաև ձեռք է բերել «ԱրՔա» վճարային համակարգի լիիրավ անդամի կարգավիճակ: 2006 թ.-ի ընթացքում բանկի կողմից բացվել է նաև երեք նոր մասնաճյուղ:



Պրոմեթեյ Բանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.)	6 766 395	8 551 370	26,38
	այդ թվում՝ վարկային ներդրումներ	3 229 534	2 825 842	-12,50
2	Պարտավորություններ (ընդ.)	2 922 687	4 206 331	43,92
	այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	645 779	1 834 399	184,06
3	Ընդհանուր կապիտալ	3 843 467	4 345 039	13,05
	այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ	3 538 638	3 700 000	4,56
	կուտակված շահույթ/վնաս	252 998	592 964	134,37
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	2	x
5	Աշխատակիցների քանակը	x	72	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 26.38 %-ով և տարեվերջին կազմել մոտ 8.55 մլրդ դրամ: Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է պետական գանձապետական պարտատոմսերում ներդրումների աճով: Տարվա կտրվածքով ներդրումները պետական գանձապետական պարտատոմսերում աճել է 73.26 %-ով կամ 0.32 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով 0.76 մլրդ դրամ: Բանկի վարկային ներդրումները տարվա կտրվածքով նվազել են 12.5 %-ով: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 2.83 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 33.1 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 72.42 %-ը կամ 2.0 մլրդ դրամ, իսկ 27.58 %-ը կամ 0.8 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել է 23.26 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը աճել 38.49 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում մոտ 0.43 մլրդ դրամը կամ վարկային ներդրումների 15.19 %-ը կազմել է հիփոթեքային վարկերը, իսկ 0.63 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 80.77 %-ը՝ սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների և վարկային ներդրումների ծավալներով ՀԲՄ անդամ բանկերի շարքում գրավել է 18-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 43.92 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 115.5 %-ով, իսկ ժամկետային ավանդները նվազել 12.16 %-ով, տարեվերջին կազմելով 1.1 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ նույնպես 18-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 13.05 %-ով, որը ապահովվել է կուտակված շահույթի և կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին: Բանկի կուտակված շահույթը տարեվերջին կազմել է մոտ 0.6 մլրդ դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճը կազմել է 134.37 %, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում՝ 13.79 %-ը: Բանկի կանոնադրական հիմնադրամը տարվա ընթացքում համալրվել է մոտ 0.16 մլրդ դրամով կամ 4.56 տոկոսով:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 0.43 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 172.6 մլն դրամով կամ 68.21 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 38.29 %-ով, իսկ ծախսերը՝ 26.07 %-ով, կազմելով համապատասխանաբար 1.27 և 0.73 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 0.54 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համեմուն ցուցանիշին գերազանցում է 59.14 %-ով կամ 200.7 մլն դրամով: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 9-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 3.21 տոկոսային կետով, կազմելով 9.79 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 1.24 տոկոսային կետով, կազմելով 4.98 %:



Հայրիզներսանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.) այդ թվում՝ վարկային ներդրումներ	9 459 195 3 729 820	16 607 509 5 938 247	75,57 59,21
2	Պարտավորություններ (ընդ.) այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	6 895 680 838 828	13 889 969 2 602 548	101,43 210,26
3	Ընդհանուր կապիտալ այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ կուտակված շահույթ/վնաս	2 563 717 2 400 000 93 691	2 717 540 2 400 000 247 540	6,00 0,00 164,21
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	1	x
5	Աշխատակիցների քանակը	x	99	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 75.57 %-ով և տարեվերջին կազմել մոտ 16.61 մլրդ դրամ: Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների, ինչպես նաև պետական գանձապետական պարտատոմսերում ներդրումների աճով: Տարվա կտրվածքով վարկային ներդրումները աճել են 59.21 %-ով կամ 2.2 մլրդ դրամով, իսկ ներդրումները պետական գանձապետական պարտատոմսերում՝ 64.46 %-ով կամ 1.2 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով 3.1 մլրդ դրամ: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 5.94 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 35.76 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 74.21 %-ը կամ 4.4 մլրդ դրամ, իսկ 25.79 %-ը կամ 1.5 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 695.42 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը նվազել 35.53 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում 1.2 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 78.43 %-ը կազմել է սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՀԲՄ անդամ բանկերի շարքում գրավել է 10-րդ տեղը, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 12-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 101.43 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 29.39 %-ով, իսկ ժամկետային ավանդները՝ 289.27 %-ով, տարեվերջին կազմելով 3.3 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ 10-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 6.0 %-ով, որը ապահովվել է կուտակված շահույթի ավելացման հաշվին: Բանկի կուտակված շահույթը տարեվերջին կազմել է մոտ 247.5 մլն դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճը կազմել է 164.21 %:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 153.9 մլն դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 113.8 մլն դրամով կամ 283.28 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազել են 9.17 %-ով, իսկ ծախսերը՝ 19.21 %-ով, կազմելով համապատասխանաբար 1.21 և 1.03 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 180.0 մլն դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համեմատ ցուցանիշին գերազանցում է 214.42 %-ով կամ 122.8 մլն դրամով: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 19-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 4.09 տոկոսային կետով, կազմելով 5.66 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 0.51 տոկոսային կետով, կազմելով 0.93 %:

2006 թ.-ի ընթացքում բանկի կողմից բացվել է մեկ մասնաճյուղ երևան քաղաքում:



FSU Ինվեստորանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.) այդ թվում՝ վարկային ներդրումներ	5 290 482	9 567 837	80,85
		2 986 524	6 026 209	101,78
2	Պարտավորություններ (ընդ.) այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	2 249 394	6 312 249	180,62
		134 260	284 726	112,07
3	Ընդհանուր կապիտալ այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ կուտակված շահույթ/վնաս	3 040 900	3 255 588	7,06
		3 400 000	3 400 000	0,00
		-359 048	-144 412	-59,78
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	2	x
5	Աշխատակիցների քանակը	x	86	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 80.85 %-ով և տարեվերջին կազմել մոտ 9.57 մլրդ դրամ: Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների, ինչպես նաև պետական գանձապետական պարտատոմսերում ներդրումների աճով: Տարվա կտրվածքով վարկային ներդրումները աճել են 101.78 %-ով կամ 3.0 մլրդ դրամով, իսկ ներդրումները պետական գանձապետական պարտատոմսերում՝ 69.32 %-ով կամ 0.32 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով 0.78 մլրդ դրամ: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 6.03 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 63.01 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 64.71 %-ը կամ 3.9 մլրդ դրամ, իսկ 35.29 %-ը կամ 2.1 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 125.58 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը՝ 71.16 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում մոտ 1.0 մլրդ դրամը կամ վարկային ներդրումների 16.58 %-ը կազմել է հիփոթեքային վարկերը, իսկ 1.8 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 84.51 %-ը՝ սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՀԲՄ անդամ բանկերի շարքում գրավել է 14-րդ տեղը, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 11-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 180.62 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 74.74 %-ով, իսկ ժամկետային ավանդները՝ 34.36 %-ով, տարեվերջին կազմելով 0.2 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ 14-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 7.06 %-ով, որը ապահովվել է կուտակված վնասի նվազման հաշվին: Բանկի կուտակված վնասը տարեվերջին կազմել է մոտ 144.2 մլն դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ նվազումը կազմել է 59.78 %:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 214.6 մլն դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 512.0 մլն դրամով կամ 172.28 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 448.95 %-ով, իսկ ծախսերը՝ 152.96 %-ով, կազմելով համապատասխանաբար 1.79 և 1.58 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 214.6 մլն դրամ հաշվեկշռային շահույթ: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 16-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 16.37 տոկոսային կետով, կազմելով 6.59 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 7.86 տոկոսային կետով, կազմելով 2.24 %:

ԱրմՍվիսԲանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.)	6 012 619	9 778 924	62,64
	այդ թվում՝ վարկային ներդրումներ	2 494 210	2 483 485	-0,43
2	Պարտավորություններ (ընդ.)	3 034 362	6 715 042	121,30
	այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	796 388	1 251 046	57,09
3	Ընդհանուր կապիտալ	2 978 691	3 063 882	2,86
	այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ կուտակված շահույթ/վնաս	3 000 000	3 000 000	0,00
		-22 100	51 066	331,07
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	0	x
5	Աշխատակիցների քանակը	x	57	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 62.64 %-ով և տարեվերջին կազմել մոտ 9.78 մլրդ դրամ: Վարկային ներդրումները տարվա ընթացքում նվազել են 0.43 %-ով, որի իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 2.48 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 25.36 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 85.09 %-ը կամ 2.1 մլրդ դրամ, իսկ 14.91 %-ը կամ 0.37 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 9.31 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը նվազել 13.07 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում 10.2 մլն դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 2.7 %-ը կազմել է սպառողական վարկերը, իսկ 39.0 մլն. դրամը կամ ֆիզիկական վարկերի 10.54 %-ը՝ հիփոթեքային վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՀԲՄ անդամ բանկերի շարքում զրավել է 13-րդ տեղը, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 19-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 121.3 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 34.94 %-ով, իսկ ժամկետային ավանդները՝ 95.65 %-ով, տարեվերջին կազմելով 1.6 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ 13-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 2.86 %-ով, որը ապահովվել է կուտակված շահույթի ավելացման հաշվին: Բանկի կուտակված շահույթը տարեվերջին կազմել է մոտ 51.1 մլն դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճը կազմել է 331.07 %:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 73.2 մլն դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 88.3 մլն դրամով կամ 584.71 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 147.47 %-ով, իսկ ծախսերը՝ 106.44 %-ով, կազմելով համապատասխանաբար 0.73 և 0.64 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 90.0 մլն դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համանուն ցուցանիշին գերազանցում է 105.0 մլն դրամով: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 18-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 2.9 տոկոսային կետով, կազմելով 2.39 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 1.0 տոկոսային կետով, կազմելով 0.75 %:



Ջարգացման Հայկական Բանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.) այդ թվում՝ վարկային ներդրումներ	8 262 203	9 255 320	12,02
		3 180 392	4 392 757	38,12
2	Պարտավորություններ (ընդ.) այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	5 353 466	5 465 353	2,09
		2 466 255	2 519 033	2,14
3	Ընդհանուր կապիտալ այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ կուտակված շահույթ/վնաս	2 908 870	3 789 967	30,29
		3 560 123	4 206 641	18,16
		-1 096 930	-856 155	-21,95
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	0	x
5	Աշխատակիցների քանակը	x	74	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 12.02 %-ով և տարեվերջին կազմել մոտ 9.26 մլրդ դրամ: Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների աճով, որը տարվա կտրվածքով կազմել է 38.12 %: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 4.39 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 47.41 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 51.52 %-ը կամ 2.3 մլրդ դրամ, իսկ 46.82 %-ը կամ 2.1 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 44.95 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը՝ 71.48 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում մոտ 0.51 մլրդ դրամը կամ վարկային ներդրումների 11.62 %-ը կազմել է հիփոթեքային վարկերը, իսկ 1.54 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 74.76 %-ը՝ սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՀԲՄ անդամ բանկերի շարքում գրավել է 16-րդ տեղը, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 13-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 2.09 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 82.0 %-ով, իսկ ժամկետային ավանդները նվազել 9.14 %-ով, տարեվերջին կազմելով 2.3 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ 15-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 30.29 %-ով, որը ապահովվել է կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին: Բանկի կուտակված վնասը տարեվերջին կազմել է մոտ 856.2 մլն դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ նվազումը կազմել է 21.95 %:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 240.8 մլն դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 413.6 մլն դրամով կամ 239.37 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազել են 36.58 %-ով, իսկ ծախսերը՝ 48.53 %-ով, կազմելով համապատասխանաբար 1.75 և 1.51 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 240.8 մլն դրամ հաշվեկշռային շահույթ: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 12-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 12.29 տոկոսային կետով, կազմելով 6.35 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 4.69 տոկոսային կետով, կազմելով 2.6 %:

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.) այդ թվում՝ վարկային ներդրումներ	14 258 242	13 652 267	-4,25
		6 129 911	7 586 378	23,76
2	Պարտավորություններ (ընդ.) այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	11 353 442	10 471 280	-7,77
		4 562 211	5 521 644	21,03
3	Ընդհանուր կապիտալ այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ կուտակված շահույթ/վնաս	2 904 746	3 180 987	9,51
		2 497 248	2 497 248	0,00
		233 258	508 438	117,97
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	8	x
5	Աշխատակիցների քանակը	x	194	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում նվազել են 4.25 %-ով և տարեվերջին կազմել մոտ 13.65 մլրդ դրամ: Բանկի վարկային ներդրումները տարվա կտրվածքով աճել են 23.7 %-ով: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 7.59 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 55.53 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 32.41 %-ը կամ 2.5 մլրդ դրամ, իսկ 65.78 %-ը կամ 5.0 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 2.17 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը՝ 40.09 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում մոտ 4.93 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 98.8 %-ը կազմել է սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՉԲԱ անդամ բանկերի շարքում գրավել է 11-րդ տեղը, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 10-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 7.77 %-ով զիջել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում նվազել են 29.36 %-ով, իսկ ժամկետային ավանդները աճել 22.32 %-ով, տարեվերջին կազմելով 5.6 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՉԲԱ բանկերի մեջ 11-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 9.51 %-ով, որը ապահովվել է կուտակված շահույթի ավելացման հաշվին: Բանկի կուտակված շահույթը տարեվերջին կազմել է մոտ 0.51 մլրդ դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճը կազմել է 117.97 %, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում՝ 16.04 %-ը:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 0.28 մլրդ դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 97.0 մլն դրամով կամ 54.7 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 43.5 %-ով, իսկ ծախսերը՝ 43.56 %-ով, կազմելով համապատասխանաբար 2.37 և 2.0 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 0.37 մլրդ դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համեմատ ցուցանիշին գերազանցում է 43.18 %-ով կամ 111.6 մլն դրամով: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՉԲԱ բանկերի թվում 17-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում աճել է 2.53 տոկոսային կետով, կազմելով 8.65 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 0.77 տոկոսային կետով, կազմելով 2.02 %:

2006 թ.-ի ընթացքում բանկի կողմից բացվել է չորս նոր մասնաճյուղ ՀՀ մարզերում:



Հայներարտբանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.)	12 366 563	11 300 565	-8,62
	այդ թվում՝ վարկային ներդրումներ	4 768 431	3 427 548	-28,12
2	Պարտավորություններ (ընդ.)	9 193 844	7 909 464	-13,97
	այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	1 027 379	716 905	-30,22
3	Ընդհանուր կապիտալ	3 173 108	3 391 101	6,87
	այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ	2 028 408	2 028 408	0,00
	կուտակված շահույթ/վնաս	270 483	280 788	3,81
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	0	x
5	Աշխատակիցների քանակը	x	49	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում նվազել են 8.62 %-ով և տարեվերջին կազմել մոտ 11.3 մլրդ դրամ: Վարկային ներդրումները տարվա կտրվածքով նվազել է 28.12 %-ով կամ 1.35 մլրդ դրամով, իսկ ներդրումները պետական գանձապետական պարտատոմսերում աճել 29.12 %-ով կամ 1.0 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով 4.2 մլրդ դրամ: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 3.43 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 30.35 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 69.51 %-ը կամ 2.4 մլրդ դրամ, իսկ 1.51 %-ը կամ 51.8 մլն դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ նվազել է 14.42 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը աճել 4151.56 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում 51.8 մլն դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 100 %-ը կազմել է սպառողական վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՀԲՄ անդամ բանկերի շարքում գրավել է 12-րդ տեղը, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 14-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 13.97 %-ով զիջել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցապահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 23.46 %-ով, իսկ ժամկետային ավանդները նվազել 40.64 %-ով, տարեվերջին կազմելով 1.6 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ 12-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 6.87 %-ով, որը ապահովվել է նաև կուտակված շահույթի ավելացման հաշվին: Բանկի կուտակված շահույթը տարեվերջին կազմել է մոտ 280.8 մլն դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճը կազմել է 3.81 %, իսկ տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում՝ 8.28 %-ը:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովվել է 253.7 մլն դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին գերազանցում է 9.8 մլն դրամով կամ 4.04 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազել են 11.41 %-ով, իսկ ծախսերը՝ 16.38 %-ով, կազմելով համապատասխանաբար 1.07 և 0.76 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 310.0 մլն դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համեմուն ցուցանիշին գերազանցում է 3.7 %-ով կամ 11.1 մլն դրամով: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 15-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում նվազել է 0.21 տոկոսային կետով, կազմելով 7.48 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը աճել 0.28 տոկոսային կետով, կազմելով 2.25 %:

Կասկադ Բանկ

Բանկի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Հ/Հ	Անվանումը	01.01.06 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	01.01.07 թ.-ի դրությամբ (հազ. դրամ)	2006 թ.-ի ընթացքում աճ/նվազ. (%)
1	2	3	4	5
1	Ակտիվներ (ընդ.) այդ թվում՝ վարկային ներդրումներ	8 723 592	8 804 721	0,93
		1 336 649	3 018 821	125,85
2	Պարտավորություններ (ընդ.) այդ թվում՝ ֆիզ. անձանց ավանդներ	4 090 625	4 126 623	0,88
		566 656	1 381 111	143,73
3	Ընդհանուր կապիտալ այդ թվում՝ կանոնադ. հիմնադրամ կուտակված շահույթ/վնաս	4 633 156	4 678 098	0,97
		5 269 923	5 535 000	5,03
		-637 023	-516 828	-18,87
4	Գործող մասնաճյուղերի քանակը	x	0	x
5	Աշխատակիցների քանակը	x	53	x

Ինչպես երևում է աղյուսակից, բանկի ակտիվները 2006 թ.-ի ընթացքում աճել են 0.93 %-ով և տարեվերջին կազմել մոտ 8.8 մլրդ դրամ: Բանկի ակտիվների աճը հիմնականում պայմանավորված է վարկային ներդրումների աճով, որը տարվա կտրվածքով կազմել է 125.85 %: Վարկային ներդրումների իրական ծավալը 2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հասել է 3.02 մլրդ դրամի, որը կազմում է բանկի ընդհանուր ակտիվների 34.32 %-ը, ընդ որում տնտեսությանը տրված վարկերը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 30.13 %-ը կամ 0.9 մլրդ դրամ, իսկ 49.8 %-ը կամ 1.5 մլրդ դրամը կազմել է ֆիզիկական անձանց տրված վարկերը: Տնտեսությանը տրված վարկերի ծավալը 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ աճել է 99.76 %-ով, իսկ ֆիզիկական անձանց վարկերը՝ 70.57 %-ով, ընդ որում ֆիզիկական անձանց տրված վարկերի կառուցվածքում 0.97 մլրդ դրամը կամ ֆիզիկական անձանց վարկերի 32.12 %-ը կազմել է հիփոթեքային վարկերը: 2006 թ.-ի տարեվերջին բանկը ակտիվների ծավալով ՀԲՄ անդամ բանկերի շարքում գրավել է 17-րդ տեղը, իսկ վարկային ներդրումների ծավալով՝ 16-րդ տեղը:

2006 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկի ընդհանուր պարտավորությունների ծավալը (տես աղյուսակը) 0.88 %-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամկետին ունեցած պարտավորությունների ծավալին, տեղին է նշել, որ բանկի ցպահանջ պարտավորությունները տարվա ընթացքում աճել են 29.17 %-ով, իսկ ժամկետային ավանդները՝ 167.97 %-ով, տարեվերջին կազմելով 1.2 մլրդ դրամ: Բանկի պարտավորությունների ցուցանիշը ՀԲՄ բանկերի մեջ 19-րդ ցուցանիշն է:

Բանկի ընդհանուր կապիտալը հաշվետու տարվա ընթացքում աճել է 0.97 %-ով, որը ապահովվել է կանոնադրական հիմնադրամի համալրման և կուտակված վնասի նվազման հաշվին: Բանկի կուտակված վնասը տարեվերջին կազմել է մոտ 516.8 մլն դրամ՝ 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի համեմատ նվազումը կազմել է 18.87 %: Բանկի կանոնադրական հիմնադրամը տարվա ընթացքում համալրվել է մոտ 265.0 մլն դրամով կամ 5.03 տոկոսով:

Բանկը հաշվետու տարվա ընթացքում ապահովել է 120.2 մլն դրամ մաքուր շահույթ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշին զիջում է 31.0 մլն դրամով կամ 20.48 %-ով: 2006 թ.-ի ընթացքում բանկի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 114.42 %-ով, իսկ ծախսերը՝ 149.7 %-ով, կազմելով համապատասխանաբար 1.26 և 1.1 մլրդ դրամ, արդյունքում ապահովվել է 160.0 մլն դրամ հաշվեկշռային շահույթ, որը նախորդ տարվա համեմատ ցուցանիշին գերազանցում է 8.77 %-ով կամ 12.9 մլն դրամով: Բանկի ընդհանուր կապիտալի մեծությունը ՀԲՄ բանկերի թվում 8-րդ ցուցանիշն է:

Բանկի ROE-ն՝ կապիտալի եկամտաբերության մակարդակը 2006 թ.-ի ընթացքում նվազել է 0.69 տոկոսային կետով, կազմելով 2.57 %, իսկ ROA-ն՝ ակտիվների շահութաբերության մակարդակը՝ 0.36 տոկոսային կետով, կազմելով 1.37 %:

2006 թ.-ի ընթացքում բանկը ընտրվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից «ՀՀ-ում բնակարանային ֆինանսավորման կայուն շուկայի զարգացման» վարկային ծրագրի և «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի կառավարման՝ հիմնադրամ-Հայաստանի, ինչպես նաև «Քաղաքային ջեռուցման» ծրագրի սպասարկող բանկ: